

## ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀՀ հարկային ծառայությունում ռիսկային չափանիշների հիման վրա ստուգումների ավտոմատացված համակարգի ներդրման արդյունքների մասին**  
(22.06.2012թ. դրությամբ)

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայությունում ռիսկային չափանիշների հիման վրա ստուգումների ավտոմատացված համակարգը (ՌՉՍՀ) գործարկվել է 2011թ.-ին: Ծրագրի օգնությամբ առաջին անգամ հրապարակվել է «2011 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից նախատեսվող ստուգումների պլանը», իսկ 2011թ. տարեվերջին ՊԵԿ-ը հրապարակել է «2012 թվականի ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը»:

Ինչպես ցույց են տալիս հարկային ստուգումների փաստացի տվյալները (տես՝ Աղյուսակ 1), 2012թ. հունվար-մայիս ամիսներին իրականացվել են 4760 ստուգումներ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 6764 ստուգումների դիմաց, կամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ **2012թ. հունվար-մայիս ամիսներին անցկացված ստուգումների քանակը նվազել է մոտ 30%-ով** (2004 միավորով): Այդ թվում՝

- բյուջեյի հետ փոխհարաբերությունների ստուգումների քանակը նվազել է կրկնակի անգամ՝ 52%-ով, կազմելով 273 ստուգումներ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 566-ի դիմաց,
- ելակետային տվյալների ստուգումների քանակը նվազել է 56%-ով, կազմելով 170 ստուգում՝ նախորդ տարվա 386-ի դիմաց,
- մասնակի ստուգումների քանակը նվազել է 36%-ով, կազմելով 509 ստուգում՝ նախորդ տարվա 798-ի դիմաց,
- չգրանցված աշխատուժի հայտնաբերմանն ուղղված ստուգումների քանակը նվազել է 24%-ով, կազմելով 1255 ստուգում՝ նախորդ տարվա 951-ի դիմաց,
- ՀԴՄ-ների շահագործման կանոնների պահպանման ստուգումների քանակը նվազել է 26%-ով, կազմելով 3635 ստուգում՝ նախորդ տարվա 2700-ի դիմաց,

- ոչ էականորեն աճել են քրեական գործերով իրականացվող ստուգումների և վերստուգումների քանակները՝ համապատասխանաբար 34%-ով և 8%-ով:

Չնայած ստուգումների քանակի կտրուկ նվազմանը, 2012թ.-ին հայտնաբերվել է 11958,1 մլն դրամի լրացուցիչ հարկային պարտավորություններ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հայտնաբերված 7572,8 մլն դրամի դիմաց, կամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ **2012թ. հունվար-մայիս ամիսներին ստուգումներով հայտնաբերված լրացուցիչ հարկային պարտավորությունների գումարը ավելացել է մոտ 58%-ով** (4385,4 մլն դրամով): Այդ թվում՝ բյուջեյի հետ փոխհարաբերությունների ստուգումներով հայտնաբերված պարտավորությունների գումարը ավելացել է մոտ 80%-ով, կազմելով 5874,8 մլն դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 3274.7 մլն դրամի դիմաց:

Արդյունքում կարելի է եզրահանգել, որ նշված ժամանակահատվածում **հարկային ստուգումների արդյունավետությունն ավելի քան կրկնապատկվել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ**: Մասնավորապես՝ 2012թ. հունվար-մայիս ամիսներին անցկացված **մեկ ստուգման հաշվով հայտնաբերված լրացուցիչ պարտավորությունների գումարը աճել է 124%-ով**, կազմելով միջինում 2512.2 հազ.դրամ՝ նախորդ տարվա 1119.6 հազ.դրամի դիմաց: Այդ թվում՝ բյուջեյի հետ փոխհարաբերությունների 1 ստուգման հաշվով հայտնաբերված գումարը միջինում ավելացել է 3,7 անգամ, կազմելով 21519,4 հազ.դրամ նախորդ տարվա 5785.6 հազ.դրամի դիմաց:

Ստուգումների թվաքանակի վերը նշված կրճատումը և դրանց արդյունավետության կտրուկ բարձրացումը հնարավոր են դարձել մեծամասամբ ի շնորհիվ նոր ավտոմատացված ՌՉՍՀ-ի, որն ապահովում է ստուգման ենթակա հարկ վճարողների առավել հասցեական և արդյունավետ ընտրությունը, ինչպես նաև ստուգումների կազմակերպման և անցկացման բարեփոխումների հաշվին:

Աղյուսակ 1. 2011 և 2012թթ. հունվար-մայիս ամիսներին իրականացված ստուգումների համեմատականի վերաբերյալ

(հազար դրամ)

Ստուգման տեսակ	Ստուգումների քանակ			Հայտնաբերված գումար, ընդամենը			Մեկ ստուգման հաշվով հայտնաբերված գումար		
	2011	2012	տարբերություն (2 - 1)	2011	2012	տարբերություն (5 - 4)	2011	2012	տարբերություն (8 - 7)
ա	1	2	3	4	5	6	7	8	9
ԲՍ	566	273	-293	3 274 660,4	5 874 803,4	2 600 143,0	5 785,6	21 519,4	15 733,8
ԻՍ	87	117	30	1 496 011,3	2 292 767,8	796 756,5	17 195,5	19 596,3	2 400,8
ՎՍ	37	40	3	2 047 933,5	3 247 813,1	1 199 879,6	55 349,6	81 195,3	25 845,8
ՀԴՄ	3 635	2 700	-935	514 116,5	388 641,9	-125 474,5	141,4	143,9	2,5
ԵՍ	386	170	-216	36 538,1	8 728,1	-27 810,0	94,7	51,3	-43,3
ՄԱ	798	509	-289	122 834,7	78 524,8	-44 309,9	153,9	154,3	0,3
ԶԱ	1 255	951	-304	80 700,2	66 870,0	-13 830,2	64,3	70,3	6,0
Ընդամենը	6 764	4 760	-2 004	7 572 794,7	11 958 149,1	4 385 354,4	1 119,6	2 512,2	1 392,6